ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/04

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի 22.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/04 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) Խորհրդին ներկայացրած 22.05.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար «ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի կոյուղագծի, Բերքաբեր, Ն. Ծաղկավան, Ն.Կ. Աղբյուր և Կոթի համայնքների փողոցների լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների» կատարման նպատակով

կազմակերպվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն սահմանված կարգով մասնակցության հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնով և առաջարկել է ամենացածր գնային առաջարկը՝ 8 268 000 ՀՀ դրամ, սակայն Ընկերության հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 04-Ա արձանագրությամբ կայացրած որոշմամբ գնահատվել է անբավարար և մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ձևափոխված է:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ մասը՝ Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները:

2. դադարեցնել «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 04-Ա արձանագրությամբ կայացված որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.05.2016թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 22.05.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանը 24.05.2017թ. թիվ 14-01/43 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի 25.04.2017թ. թիվ 03-Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով

բաց ընթացակարգի՝ «ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի կոյուղագծի, Բերքաբեր, Ն. Ծաղկավան, Ն.Կ. Աղբյուր և Կոթի համայնքների փողոցների լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների» կատարման իրավերը:

«ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի համաձայն՝ Ընթացակարգը կայացել է 15.05.2017թ. ժամը 14:00-ին գնումների էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի 15.05.2017թ. բացման նիստի թիվ 04-Ա արձանագրության համաձայն՝ ընթացակարգին մասնակցել և գնային առաջարկներ են ներկայացրել «ԱՆՆԱՐ», «ԱԶԿԱ», «ԲՆՎ», «ԷԴԻՏԱ ԱԿ», «Կարեն և Իդա», «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ», «Արտյոմ Մինասյան», «Պապ և Դավիթ», «Վահրադյան Շին» և «Խաչմիշշին» ՍՊԸ-ները:

«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար, սակայն գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է, քանի որ հայտով ներկայացված Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ձևափոխված է եղել, այսինքն՝ կտրվել և հանվել է հրավերով հաստատված տուժանքի մասին համաձայնագրի օրինակելի ձևի 3-րդ կետով սահմանված «գլխավոր հաշվապահ» նշումը, ինչը չի թույլատրվում օրենսդրությամբ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 370-րդ հոդվածով սահմանված է, որ տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է տուժանքի մասին համաձայնության անվավերության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է համաձայն՝ 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի, այն է՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի

ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Արդյունքում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2017թ. նիստի թիվ 05 արձանագրությամբ կայացված որոշմամբ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՋԿԱ» ՍՊԸ-ն:

ՀՀ Տավուշի մարզպետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.05.2016թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 24.05.2017թ. թիվ 14-01/43 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար «ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի կոյուղագծի, Բերքաբեր, Ն. Ծաղկավան, Ն.Կ. Աղբյուր և Կոթի համայնքների փողոցների լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների» կատարման նպատակով կազմակերպվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների՝ հայտ է ներկայացրել «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 9 հավելվածով:

3. Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 9
«ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04»* *ծածկագրով*
բաց ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(մասնակցության հայտի ապահովում)

ք. Իջևան <<_____>>_____2017 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է << ՀՀ Տավուշի մարզպետարանի>>* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << ՀՀ *Տավուշի մարզի Աչաջուր համայնքի կոյուղագծի, Բերքաբեր համայնքի փողոցների լուսավորության համակարգի, Ն. Ծաղկավան համայնքի փողոցների լուսավորության համակարգի, Ն.Կ. Աղբյուր համայնքի փողոցների լուսավորության համակարգի , Կոթի համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների*>>*ձեռքբերման **«ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04»*** ծածկագրով ԲԸ** գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝
Հասցեն՝
Սպասարկող բանկի անվանումը,
ՀՀ
ՀԿՀՀ
տնօրեն՝ _____
_____ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____
_____ (ստորագրություն)
Կ.Տ _____

* *Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:*

** *Պատվիրատուի կողմից նախապես հրավերով լրացվում է գնման ընթացակարգը:*

4. «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի համաձայնության տեսքով, որը ստորագրվել է միայն Ընկերության տնօրենի կողմից և կնքվել:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 04-Ա արձանագրության 4.1 կետի համաձայն՝ բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է՝ պատճառաբանելով, որ տուժանքի մասին համաձայնագիրը ձևափոխված է:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2017թ. նիստի թիվ 05 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «ԱԶԿԱ» ՍՊԸ-ն:

7. «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն 22.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքին կից ներկայացրել է «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի 14.05.2017թ. գրությունն՝ ուղղված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որտեղ Ընկերությունը տեղեկացնում է, որ ***չունի գլխավոր հաշվապահ***:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի 22.05.2017թ. բողոքը՝ կից ներկայացված փաստաթղթերով, ՀՀ Տավուշի մարզպետարանի 24.05.2017թ. թիվ 14-01/43 գրությունը՝ կից փաստաթղթերով և «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 370-րդ հոդվածով սահմանված է, որ տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է տուժանքի մասին համաձայնության անվավերության:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է ***մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:***

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: ***Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝

հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի՝ ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» համաձայն՝ վճարման պահանջագիրը պարտադիր ստորագրվում է վճարողի կողմից: Նշված դաշտի/վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ն հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրնակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևի համաձայն՝ որը ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատվել են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, մասնավորապես հրամանով հաստատված է հրավերով սահմանված կարգով գնման գործընթացի մասնակցի կողմից ներկայացվող հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևը, համաձայն որի նշված համաձայնությունը ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից և պետք է հաստատվի մասնակցի կնիքով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ հայտնել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, հետևաբար, եթե մանակցի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում են համապատասխան անձանց ստորագրությունները և մասնակցի կնիքը, ապա հայտն օրենքով սահմանված կարգով ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրությամբ հայտնել է հետևյալը.

1. եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից:

2. ***եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայանագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:***

«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն, մասնակցելով ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգին, հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնության տեսքով, որը ստորագրվել էր Ընկերության տնօրենի կողմից և հաստատվել կնիքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման և հրավերի պահանջների միջև, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, որը հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն չի տալիս այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, 15.05.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 04-Ա արձանագրության 4.1 կետի համաձայն՝ բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է՝ պատճառաբանելով, որ տուժանքի մասին համաձայնագիրը ձևափոխված է:

Մինչդեռ, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն 22.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքին կից ներկայացրել է «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի 14.05.2017թ. գրությունն՝ ուղղված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որտեղ Ընկերությունը տեղեկացնում է, որ ***չունի գլխավոր հաշվապահ:***

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ ***«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառումը վարվել է կազմակերպության տնօրենի կողմից անձամբ,*** հետևաբար տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության, ուստի Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Պատվիրատուն, մերժելով «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ եթե Ընկերությունը չունի գլխավոր հաշվապահ և կազմակերպության ղեկավարն անձամբ է իրականացնում հաշվապահական հաշվառումը, ապա գլխավոր հաշվապահի ստորագրության դաշտի առկայությունը չի կարող դիտվել որպես պահանջվող վավերապայման և չի կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի 22.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/04» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 04-Ա արձանագրությամբ՝ «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ